

**ԲԱՂՈՒԱՆՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ**

Ապաստաբան եւ կամուրջ Անիում.— Խորհրդի եւ Խմբագրական Մասնաժողովի 1907 թ. Ապրիլի 5-ին կայացած խառը ժողովը ինկատ առնելով այն մեծ նշանակութիւնը, որ ունի Անին հնագիտական—ազգագրական տեսակէտից, որոշեց ամէն ջանք դորձ դնել նրա պահպանութեան եւ ուսումնասիրութեան համար, միանգամայն աշխատելով որոշ յարմարութիւններ ստեղծել Անին այցելողներին եւ ուսումնասիրողներին համար: Երկար խորհրդակցութիւնից յետոյ ժողովը որոշեց խնդրել իւր Սղէքսանդրապոլի եւ Ղարսի ճիւղերին, որ իրենց անմիջական հսկողութեան տակ վերցնեն Անին եւ նրա պահպանութեան խնդիրը իրենց գործունէութեան առաջնակարգ առարկան դարձնեն: Միևնոյն ժամանակ ժողովը որոշեց իւր եւ այլ միջոցներով կառուցանել Ախուրեանի վրայ մի կամուրջ, որպէսզի հնարաւոր լինի երկաթուղու համանուն կայարանից գնալ Անի, եւ երկրորդ՝ Անիում մի ասպատանարան կառուցանել, այցելուներին գիշերելու համար փոքրիշատէ յարմարութիւն տալու համար: Մինչ այս՝ Ախուրեանի վրայ մի նուազ յարմարեցնել եւ Անիում մի քանի վրաններ խփել՝ այս ամառս օգտուելու համար, եւ կազմել մի խմբարշաւ:

Մի այլ, մայիսի 10-ի ժողովում, նոյն խառն ժողովը կրկին զրադուելով Անիի խնդրով, որոշեց խնդրել Ե. Լալայեանին գնալ Անի եւ պրօֆ. Մարրի հետ որոշել թէ կամուրջի եւ թէ ասպատարանի տեղը, միանգամայն հաշուելով թէ մօտաւորապէս որքան ծախս կը գնայ:

Ե. Լալայեան կատարեց ժողովի խնդիրը, մայիսի 17-ին գնաց Անի եւ վերադարձին զեկուցեց ժողովին, որ պրօֆ. Մարրի եւ ճարտարապետ Թորոմանեանի հետ երկար խորհրդակցելուց յետո՛ շատ յարմար գտան ճարտարապետ Թորոմանեանի առաջարկը՝ կամուրջ շինել ոչ թէ Անիում, այլ Ղոշավանքում, հին կամուրջի տեղը, որովհետեւ եթէ Անիում շինուի կամուրջը՝ Ախուրեանի վրայ ուրիշ կամուրջ չլինելու պատճառով, նրա աջ փի գիւղացիները երկաթուղու կայարան գնալու համար կը գան այդ կամուրջով անցնելու՝ եւ այսպիսով Անին, որ մինչև այժմ պահպան-

ուել է մեկուսացած լինելու պատճառով, ոտնառակ կը լինի և կաւերուի, մինչդեռ եթէ Ղոշավանքում լինի կամուրջը, նախ Անին այդ վտանգից կազատուի, երկրորդ՝ անհամեմատ աւելի արժան կը նստի, երրորդ՝ նոյն գիւղի բնակիչները կը նպաստեն շինութեան և պահպանութեան և չորրորդ՝ քանի որ Ղոշավանքը իւր պատմական անցելով չափազանց կապուած է Անիի հետ, այստեղ է գտնուում հռչակաւոր կաթուղիկոսարանը, Աշոտ թագաւորի գերեզմանը և այլ հնութիւններ, անկարելի է, որ Անի այցելողը չայցելէ և Ղոշավանք, որ նրանից մի միայն չորս վերստ հեռու է գտնուում, հետեապէս և ոչ մի տարբերութիւն չիլինի, որ փոխանակ նախ Անի և ապա Ղոշավանք այցելելու, իսկ Ղոշավանք և ապա Անի այցելին: Հէնց այս վերջին պատճառարանութեամբ էլ՝ աւելի լաւ կը լինի փոխանակ Անիում ապաստարանի և թանգարանի համար նոր շէնք կառուցանելու՝ վերանորոգել Ղոշավանքի կաթուղիկոսարանի ընդարձակ դահլիճները և յարմարացնել այդ նպատակներին, այսպիսով՝ նաև այս սքանչելի շէնքը կազատուի վերջնականապէս քանդուելուց: Մինչոյն ժամանակ թանգարանը այստեղ լինելով՝ կը պահպանուի նոյն հայ գիւղի բնակիչներից, մինչդեռ անմարդարնակ Անիում, մասուսանդ ձրմուր, նա շարունակ ենթակայ է մօտակայ քիւրդ գիւղի բնակիչների կողպուման վտանգին: Մի հանրակառք կէս ժամում անցնելով Ղոշավանքից Անի՝ կարող է այցելուններին հեշտութեամբ տեղափոխել մի տեղից միւսը: Այս կամուրջի և կաթուղիկոսարանի վերանորոգման համար կը հարկաւորուի մօտաւորապէս 5—6000 ր:

Փողովը լսելով Ե. Լալայեանի ղեկուցումը՝ ինքը ևս տուեց իւր հաւանութիւնը և որոշեց դիմել «Արամազդ» նաւթարդիւնաբերական ընկերութեան, խնդրելով նպաստել: Սակայն զեռ մինչև այժմ պատասխան չէ ստացել: Նոյեմբերի 10-ի ժողովումն էլ որոշեց յատկապէս այդ նպատակի համար առաջիկայ փետրուարի 17-ին մի երեկոյթ կազմակերպել, ուր ի միջի այլոց, նաև ցուցադրել Անիի ընդհանուր տեսարանը՝ մեծ իւղաներկ պատկերով:

Յորհուրդը որոշեց խորին շնորհակալութիւն յայտնել իւր նախագահ պ. Ա. Մեկիք—Ազարեանին, որ հաճեց 1906 թ. յունիսի 13-ին, անցեալ տարիներէ նման, 200 բուրլի նուիրել յօգուսընկերութեան և «Արամազդ» նաւթարդիւնաբերական ընկերութեան, որ Յորհրդիս անդամ պ. Մնացական Յունունցի միջոցով 1907 թ. Մայիսի 18-ին 150 ր. նուիրեց և բացի սրանից՝ ընկերութեան մշտական անգամ գրուեց՝ վճարելով 50 բուրլի:

Գ. Ա. Եղեկեան վերահաստատուելով Քիֆլիսում, կրկին ստանձնեց Խմբագրական Մասնաժողովի փոխ-նախագահի պաշտօնը:

Ընկերութեան 83 մշտական անդամների վրայ աւելացան հետեւեալ չորսը ևս, որոնցից իւրաքանչիւրը վճարեց 50 բուրլի.

պ. Մկրտիչ Քալանթարեան.

պ. Գրիգոր Բայենդուրեան.

պ. Մարտիրոս Վարդանեան.

«Արամազդ» ընկերութիւն:

Նոյեմբերի 10-ի Խորհրդի և Խմբագրական Մասնաժողովի խառն ժողովում Խորհրդի նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեան խոստացաւ ընկերութեան տրամադրութեան տակ դնել իւր բնակարանի սենեակներից մինը թէ՛ ընկերութեան հրատարակութիւնները և գոյքը պահելու և թէ՛ ձեռք բերուած ազգագրական և հնագիտական իրերը ցուցադրելու: Ժողովը խորին շնորհակալութիւն յայտնեց իւր նախագահին:

Լսելով ընկերութեան Աղեքսանդրապոլի ճիւղի վարչութեան ղեկուցումը, որ պ. պ. Բագրատ Սալաթեան և բժշկատեղեւ Աւետիք Բարայեան տեղական վարչութեան խնդրով դասախօսութիւններ են կարգացել Աղեքսանդրապոլում ընկերութեան անդամների և հասարակութեան համար՝ որոշեց այդ առթիւ իւր գոհունակութիւնը յայտնել իւր ճիւղի վարչութեան, և շնորհակալութիւն վերոյիշեալ դասախօսներին:

Խմբագրական Մասնաժողովը որոշեց.

Ե. Լալայեանի «Նոր-Բայազէտի գաւառ» աշխատութեան այն մասի շարունակութիւնը, որ վերաբերում է այդ գաւառում նրա կատարած պեղումներին՝ տպագրել միայն այն ժամանակ, երբ նրա ղեկուցումը կըսպառի Մոսկուայի Հնագիտական ընկերութեան «Материалы для археологии Кавказа» հրատարակութեան մէջ, որպէսզի յետոյ կարելի լինի թերևս ձրիաբար օգտուել դրա միջանի հարիւր նկարների քլիշաներից. իսկ գաւառի տեղագրութիւնը հրատարակել այն ժամանակ, երբ ընկերութեան միջոցները թոյլ կըտան պատրաստել տալ գաւառի հինգ վերստանոց գունաւոր քարտէզը:

Ընկերութիւնս փետրուարի 18-ին Արախատիքական ընկերութեան դահլիճներում կազմակերպեց մի շքեղ պարերեկոյթ՝ Բարեկենդանը Վենետիկում Ընդարձակ դահլիճի ամբողջ պատը ծածկուած էր նկարիչ պ. Ֆէդվէճեանի մի գեղեցիկ իւղաներկ պատկերով, որ ներկայացնում էր Վենետիկի ս. Մարկոսի հրապարակը: Պարերեկոյթի ծրագիրն էր. 1) Պօլօնէզ, 2) Նէապօլիտանական բնորոշ եղանակներ, որ կատարեց Դէապօլիտանական նուագախումբը. 3) Պարեր. 4) Միբերգ. 5) Տօմբալա. 6) Պարեր՝ Մաչետ և այլն. 7) Հարսանեաց հանդէսը Վենետիկում. 8) Corridolo a) Մաղկամարտ, b) Օձամարտ. 9) Կոոմոպօլիտանա՝ միջազգային բալէտ, որ կատարեց բալէտային խումբը պ. Ստեփանովի ղեկավարութեամբ. 10) Պարեր՝ Կօտիլլօն, 11) Մոմհանդէս կամ Carso mocula. Տեղի ունեցաւ նաև պարգևաբաշխութիւն զոստաների համար, Ընկերութեան խորհրդանիշ (embleme) ականակուռ սվաստիկաներ տրուեցան օր. Թումասին (ներկայացնում էր Ոգի Հայաստանի), օր. Աթարէկեանին (ամբողջ հանդերձը ներկայացնում էր Լօտօի թերթերը) և օր. Կաջարին (պարսկական տիպական հանդերձ): Սեղանատանը պատրաստուած էին յատուկ իտալական կերակուրներ և քաղցրաւէնիք:

Լրագիրներին վկայութեամբ այս պարերեկոյթը Թիֆլիսի այս տարուայ ըուրը երկոյթներին շքեղն ու հետաքրքրականն էր:

Նոյեմբերի 1-ին խորհուրդը Վեհափառ Մկրտիչ Ա. ամենայն հայոց կաթողիկոսի մահուան առիթով ժողովի գումարուելով որոշեց իւր անդամ Ե. Լալայեանին պատգամաւոր ուղարկել Էջմիածին թաղման սգահանդիսին ներկայ լինելու և թարմ ծաղիկներից պսակ դնելու: Պսակը ներկայացնում էր ընկերութեանս խորհրդանիշ սվաստիկան՝ որի կենտրոնի ծաղկափնջի միջով անցնում էր մի մեծ տրմաւենու տերևից զրիչ:

